ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ԱԶԲ-ի աջակցությամբ իրականացվող «Կլիմայական փոփոխություններին հարմարեցվող պարենային անվտանգության բարձրացման» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 200 շահառու տնային տնտեսություններին տրամադրել բազմատեսակ օժանդակության փաթեթներ, որոնց կազմում ներառված են նաև տնկիներ:

Սույն թվականի ապրիլի 17-ին Ծրագրի շրջանակներում շարունակվել են վերոնշյալ տնկիների տրամադրման և ծառատնկման աշխատանքները Տավուշի մարզի Թեղուտ, Գանձաքար և Խաշթառակ բնակավայրերում: Ծրագրի իրականացման թիմը, համատեղ Ծրագրի խորհրդատվական ծառայություն մատուցող՝ «Ավենյու քընսալթինգ գրուպ» ՍՊԸ և «3 ԱՐ Ստրատեգիա» ՍՊԸ կոնսորցիումի ներկայացուցիչների հետ, իրականացրել է ծառատնկման աշխատանքներ: Այցերի ընթացքում շահառուներին ներկայացվել են ծառատնկման, հետագա խնամքի և մշակման արդյունավետ և ճիշտ մեթոդները՝ ապահովելու Ծրագրի կայունությունն ու բարձր արդյունքայնությունը: